ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 8, 1957 Общественные науки

Ա. Ռժդալ

ՊԱՏՐՈՆԻՄԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՐԴԵՐԻ ՄՈՏ 19-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Քուրդ ժողովրդի կյանքում ու կենցաղում, չնայած դասակարգային շերտավորմանը, ընդհուպ մինչև 20-րդ դարի սկզբները, մեծ չափով պահպանվում էին տոհմային կարգերի մնացուկները։

Պատմական, ազգագրական և ֆոլկլորային նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մինչև Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխությունը Հայաստանի քրդերի կյանքում զգալի դեր են խաղացել արենակցական-ազգակցական հարաբերությունները։

Մինչև սովետական կարգերի հաստատման առաջին տարիները Հայաստանի քրդերը դեռևս ունեին ցեղեր և բարեր[1], որոնք կառավարվում էին ցեղապետներով և բարապետներով։

Ըստ 19-րդ դարի ազգագրական և ֆոլկլորային նյութերի, քուրդ ժողովրդի հասարակական կառուցվածքը հետևյալ պատկերն էր ներկայացնում. դարիլը (ցեղ) պամամական[2] ամենամեծ խումբն էր։ Դարիլի մեջ մտնում էին բարեր, իսկ բարի մեջ՝ ընտանիքներ։ Հայաստանի քրդական դարիլը բաղկացած էր 5—10 կամ մի փոքր ավելի բարերից, իսկ բարը կազմված էր մոտավորապես մինչև 60 մեծ և փոքր ընտանիքներից։

Նախասովետական շրջանում Հայաստանում և առհասարակ Անդրկովկասում գոյություն ունեին հետևյալ ցեղերն ու բարերը՝ Զիլան (ծիլեր-ցեղ), Մլա (թևաններ-ցեղ), Սիպկա (սպիտակներ-ցեղ), Բրուկա (մորուքավորներ, հոնքավորներ-բար), կորկոտիա (ցորենապաշտներ կամ ձավարապաշտներ-բար), Շամսկա (արևապաշտներ-ցեղ), Հասանա (ցեղի ղեկավարի անուն), Ստուրկա (եղջերավորներ-բար), Մխայլա (բարապետի անուն), Բայանդուրա (տեղի անուն Թուրքիայում), Շկակա (կասկածամիտներ-ցեղ), Ռաշա (սևեր-բար), Քալադոշա (տաքարյուններ-բար), Պիվաղա (սոխապաշտներ-բար), Ախոսյա (ցեղապետի անուն), Սրհանա (սրբագործված բարակիցներ-բար), Մրոյա (մեռյալներ-բար), Հիվեյա (լուսնապաշտներ-բար)։

Բարի մեջ մտնող ընտանիքների համար ընդհանուր սեփականություն էին հանդիսանում արոտավայրերը, իսկ նստակյաց կյանք վարող քրդերի մոտ՝ մասամբ նաև մշակելի հողերը. այդ թե՛ մեծ և թե՛ փոքր ընտանիքները տնտեսական սերտ կապերի և փոխհարաբերությունների մեջ էին գտնվում միմյանց հետ։

Նախասովետական շրջանում քրդերը հիմնականում զբաղվում էին խաշնարածությամբ և հողագործությամբ։ Նրանք առանձին արհեստներ

---

[1] Բա՛ր—արենակցական-ազգակցական ընտանիքների մոտիկ բարեկամների խումբ։
[2] Պամամ—արենակից, ազգակից, բարեկամ։

չուններին։ Տնայնագործական աշխատանքներից հիշատակության արժանի են գորգագործությունը և թաղիքագործությունը։ Հայտնի են քրդական «Զիլի» (ծիլեր), «Խանքեֆի» (խանի ճաշակով) և այլ տեսակի գորգեր, որոնց զարդանկարներում կարելի է տեսնել միֆական և հնագույն կյանքի վերաբերյալ զարդամոտիվներ։ Այդ գորգերը գործում էին ողջ բարի գորգագործ աղջիկներն ու կանայք։ Գորգերի մի մասը կոչվում է այդ բարերի և ցեղերի անուններով, ինչպես, օրինակ, «Խանլյա», «Զիլլյա» և այլն։ Բացի այս համատեղ աշխատանքից, բարերի անդամները միասին էին օգտագործում նաև իրենց հովանավորության տակ գտնվող ջրերը, խոտհարքը, կալատեղը, ադուներ ապում էին մի ջրաղացում, միայյալ ուժերով, ոչխարն արածեցնում և պահում էին մի տեղ և այլն։

Իրենց տնտեսական միասնությամբ և փոխադարձ օգնությամբ ավելի սերտ կապերով հայտնի էին Երևանի նահանգի «Բուլլա», «Ստուրկա», «Բալա» և «Հարուկա» կոչված բարերը։

Մասամբ քոչվորական և մասամբ էլ կիսաքոչվորական ու նստակյաց կյանք վարող այս բարերը ամռան շոգ ամիսներին իրենց անասուններով բարձրանում էին Ադմաղան և Արագած լեռները, իսկ ձմռան ցուրտ ամիսներին իջնում էին Արարատյան դաշտի Զանգիբասարի (այժմ՝ Արտաշատի) շրջանի Նեջրլու և Հարլքյանդ գյուղերը։

Պամամական սերտ կապերով միմյանց հետ կապված այդ մարդիկ իրենց համարում էին միասնական մի կոլեկտիվ, մի ուժ, մի խումբ թե տնտեսական, թե հասարակական և թե դաղափարական տեսակետներից։

Նախքան Արևելյան Հայաստանում 1870 թ. կատարված հողային ռեֆորմը, քրդական-պամամական այդ խմբերի ընդհանուր սեփականություն կազմող արոտավայրերն ու մշակելի հողը մեծ մասամբ օգտագործվում էին կոլեկտիվ ձևով՝ ստացած գյուղատնտեսական մթերքներն ըստ շնչի բաժանելու սկզբունքով, թեև պետք է նշել, որ առյուծի բաժին ստանում էին բարապետը և բարի մեջ նշանավոր մյուս մարդիկ։ Վերջիններս այդ հանգամանքը բացատրում էին նրանով, որ իրենց տները շատ հյուրեր են գալիս, որոնց անհրաժեշտ էր արժանավայել ձևով ճանապարհ դնել։

Այսպիսով, բարապետները արհնակցական-պամամական կապերի անվան տակ շահագործում էին իրենց պամամներին։ Բացի այդ, բարապետի ազգականները կատարում էին նրա տան ծանր աշխատանքները՝ ադում էին նրա ադունը, մշակում ընդհանուր վարելահողերը, ձևոք էին բերում և նորոգում երկրագործական գործիքները, պահում բարի հոտը, հսկում արոտավայրերը և այլն։ Բարապետը, բարի ադան կամ բեգը գտնվում էր գեկավարի, հրամայողի դերում։ Արոտավայրերի օգտագործումը գլխավորապես քոչվոր քրդերի, իսկ վարելահողերի մշակումը կիսաքոչվորական և նստակյաց քրդերի մոտ կատարվում էր ցեղակից թե փոքր և թե մեծ բարերի ու գերդաստանների փոխադարձ օգնությամբ։ Սրանց մոտ անասնապահությունը առաջին տեղն էր բռնում, իսկ երկրագործությունը գրվում էր երկրորդ պլանի վրա, այդ պատճառով էլ բարի հարստության չափանիշը անասունների քանակն էր։

Անդրկովկասում առևտրա-արդյունաբերական կապիտալի զարգացման հետևանքով քրդերի նահապետական կենցաղն աստիճանաբար քայքայվում էր։ Հայաստանում կատարված հողային ռեֆորմի հետևանքով քուրդ երկրա-

գործ բարակիցը և քոչվորների մի մասը, որը նստակյաց դարձավ, մշտական օգտագործման համար հող ստացան։ Այդպիսիները ենթակա չէին գյուղական հողային համայնքի կարգադրություններին։ Նման դեպքում քուրդ գյուղացուն իրավունք էր վերապահված իր ցանկությամբ մինչև իսկ վաճառել սեփական հողամասը (ոչ ամեն տեղ) և, հակառակ բարական սովորության, գյուղից հեռանալ։

Լավագույն և մեծ տարածությամբ հողերն աղաների և բեգերի ձեռքում կենտրոնացվելուց հետո, ավելի վատթարացավ աշխատավոր քրդի տնտեսական դրությունը։ Բացի այդ, քուրդը հարկ էր տալիս ոչ միայն պետությանը, այլ նաև բարապետներին։ Հաճախ աղան կամ ոիսպին (տանուտեր) պետական հարկերի անվան տակ օրենքներից անտեղյակ պսմամներից և ոչ պսմամներից խարդախ ճանապարհով մեծ քանակությամբ դրամ և մթերք էին հավաքում։

Քրդերը պետությանը տալիս էին եկամտահարկ, զինվորական հարկ, վճարումներ էին կատարում ճանապարհաշինության և մի շարք այլ ծախսերի համար, որոնք կապված էին գյուղական համայնքի ղեկավարության (գյուղական ոիսպիների, գրագիրների, գդիրների) պահպանության հետ։

Հողաբաժանության և գյուղի շերտավորման հետևանքով մեծացավ հարուստ ընտանիքների թիվը։ Բարն սկսեց քայքայվել։

Այսպիսով, ընտանիքն աստիճանաբար կոլեկտիվ սեփականությունից անցնում է մասնավոր սեփականության։ Հողաբաժանման հետևանքով հետզհետե ուժեղանում է նաև դասակարգային շերտավորումը։ Վարելահողով և արոտավայրերով ապահովված աղաներն ու բեգերը և հարուստ տնտեսությունները դանձում էին քոչավայրի հարկ դրամով կամ բնամթերքով։ Այդ հարկը գլխավորապես վճարում էին արոտավայրերից զուրկ այն քոչվորներն ու նստակյաց քրդերը, որոնք ամառվա ամիսներին իրենց անասունները վարձով արածեցնում էին ցեղապետի կամ աղայի արոտավայրում։ Անբավարար արոտավայրեր ունեցող քրդերը կամ բարական ընտանիքները ևս իրենց անասունները կերակրում էին ցեղապետի կամ աղայի արոտավայրերում և դրա համար հարկ էին տալիս նրանց։

Ցեղապետներն ու աղաներն իրենց արոտավայրերի հարկը դանձում էին ըստ անասունների գլխաքանակի՝ 1—3 ռուբլի վճարվում էր յուրաքանչյուր խոշոր եղջերավոր անասունի և 50—60 կոպեկ՝ յուրաքանչյուր ոչխարի համար։

19-րդ դարի վերջերին Հայաստանի քրդական գյուղում նահապետական-ֆեոդալական հարաբերություններին զուգընթաց, արագ կերպով աճում էր աղայական հողատիրությունը։ Այս հանգամանքը բնականորեն չէր կարող իր բացասական ազդեցությունը չթողնել քրդական բարի, նրա ընտանիքների անդամների փոխադարձ հարաբերությունների վրա։

Չնայած մասնավոր սեփականության առկայությանը, այնուամենայնիվ, իրրև բարական մնացուկներ ընդհուպ մինչև 1910-ական թվականները Հայաստանի քրդարնակ շրջաններում «Ջունկա» (թոչնապաշտներ), «Իրզնկա» (այծապաշտներ), «Մխայլա» (բարապետի անուն) և արենակցական-ազգակցական այլ խմբերում երկրագործական գործիքները, բարական որոշ շենքեր և անասուններ դեռևս կոլեկտիվ սեփականություն էին

համարվում։ Պսամական այդ խմբերը իրենց գործիքներով, շենքերով և բանվորական ուժով միշտ օգնում էին միմյանց։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո էլ, մինչև կոլտնտեսությունների կազմակերպման շրջանը, բարական փոխադարձ օգնության այդ սովորությունը դեռևս շարունակվում էր գոյություն ունենալ։

Բարի անդամներն իրենց տներին կից պատերի մեջ բաց էին թողնում մի անցք, որ քրդերեն կոչվում է «qolk» (ակնատ), որն օժանդակում էր լուրեր փոխանակելուն պսամանների միջև։ Դրանց մնացուկներին այժմ էլ կարելի է հանդիպել Հայաստանի քրդաբնակ գյուղերի հին տներում։ Բարն ուներ ռազմական միասնական ուժ և միահամուռ ղեկավարություն։ Բարական ղեկավարը կոչվում է սարքար (ղեկավար), իսկ ղեկավարությունը՝ «սարքարտիս»։ Այդ ղեկավարությունն իրականացնում էր ծերակույտը, որին հաճախ մասնակցում էին նաև քաջահամբավ կանայք։

Ռազմական գործողությունների ժամանակ բարի ծերակույտի ղեկավարությամբ նրա կազմող բոլոր տղամարդիկ և կանայք, չնայած ներբարական որոշ հակասություններին, մի մարդու պես ոտքի էին ելնում և կոլեկտիվ կերպով մասնակցում թշնամու դեմ մղվող պայքարին։ Բացի այդ, միացյալ ուժերով պաշտպանվում էին օտար նվաճողներից՝ վրիժառուներից, ավազակախմբերից, կին առևանգողներից, գողերից, այլ բարերի հարձակումներից և այլ պատուհասներից։ Իսկ երբ քրդերն ապստամբում էին տիրող կարգերի դեմ, այն ժամանակ ցեղերի մեջ մտնող բարերը միանում և միացյալ ուժերով պայքարում էին թշնամու դեմ։ Երբդական ցեղերը, այդ թվում նաև մեծ բարերն ունեին ռազմական միավորումներ, որոնք կոչվում էին «քոմեռ դարիլաս» (ցեղերի խմբեր), «քոմեռ բարաս» (բարերի խմբեր) կամ «ալայիս» (ռազմական դումարտակներ)։ Ռազմական այս խմբերն անմիջապես ղեկավարվում էին իրենց ցեղի կամ բարի սարքարի կողմից։

Արյան վրիժառության սովորության փաստը նույնպես ցույց է տալիս բարերի առկայությունն ու նրանց հասարակական միասնությունը նախասովետական շրջանի քրդերի կյանքում։ Ըստ սովորույթի իրավունքի, բարի յուրաքանչյուր անդամ պարտավոր էր իր սպանված կամ տուժած անդամի արյան վրեժը լուծել ախոյանից։ Ցեղերի ու բարերի անդամների համար դա համարվում էր իրավունք և պարտականություն։ Խուն պեշ խունեա (արյան փոխարեն արյուն), հաճախ ասում էին վրիժառու քրդերը, որովհետև ցեղի կամ բարի որևէ անդամի սպանության հետևանքով ցեղը կամ բարը թե տնտեսապես և թե ռազմականապես տուժում էր։ Նույն չափով էլ կամ ավելի պետք է պակասեցվեր թշնամի ցեղի կամ բարի տնտեսական և ռազմական ուժը։ Բարի սպանված անդամի արյան վրեժը կարող էր առնել նաև տուժածի դաստարրակը[1]։

Բարական կամ ցեղական այս սովորությունը ցույց է տալիս արենակիցների սերտ կապերը, նրանց պսամական միասնությունը իրենց ծլկրասն դեկն դարրասկըրի (մի մոր շապկից անցկացրած)։ Այս սովորությունը որոշ բարերի մոտ սրբադրծվում էր կրոնական ծեսերով։

[1] Դաստարրակ—բարդ բառ է, բաղկացած դաստ (ձեռք) և բրա (եղբայր) բառերից, որ նշանակում է ձեռքի եղբայր, ասել է թե՝ եղբայրակից, արյան եղբայր կամ հայոց դավառաբարբառներում՝ «ողջում ախպեր», սլավոնական „побратимство"-ն, գերմանական „Verbrüderung"-ը։

Բարի անդամների միասնությունը ընորոշվում էր նաև էնդոգամիայի առկայությամբ։ Քրդերը ձգտում էին իրենց տղաներին ամուսնացնել բարակից աղջկա կամ կնեզի[1] հետ։

«Կնեզ նկարա նամամիե բրկա» (կնեզը չի կարող դավաճան լինել), ասում էին ամուսնացողների ծնողներն ու տան մյուս անդամները, որովհետև նա արենակից, բարի աղջիկ է։ Ուստի տան աղջիկը համարվում էր ոչ միայն ծնողների աղջիկ զավակը, այլև բարից սերված աղջիկ, ողջ բարի կնեզ։

Բարական միասնությունն արտահայտվում էր նաև առևանգման հետ կապված սովորություններով, որը հաճախ տեղի էր տալիս վրիժառության ակտի։ Հայտնի է, որ տոհմային շրջանում, երբ որևէ տոհմի աղջիկներից մեկը առևանգվում էր մի այլ տոհմի տղաներից մեկն ու մեկի համար, տուժող տոհմի բոլոր անդամները ոտքի էին ելնում և իրենց վրեժն առնելու համար մեծ պայքար մղում թշնամի տոհմի դեմ։ Այդ ժամանակ աղջիկ առևանգող տղամարդու տոհմակիցները, ըստ սովորության, հերթով կենակցում էին առևանգված աղջկա հետ և ապա հանձնում նրան, ում համար նա առևանգված էր։ Այդ սովորության հետքերը նախասովետական շրջանում տեսնում ենք Կարսի մարզի Տեկորի շրջանի քրդական «Մուսեսանա» բարի մեջ, որտեղ առևանգողներն իրենց բարակցի պատիվը բարձր պահելու համար, առևանգված աղջկան հերթով տանում էին իրենց տները և պատվով, նվիրատվություններով ու կրոնական ծիսակատարություններով հանձնում բուն առևանգողին՝ առանց աղջկա հետ կենակցելու։ Այս երևույթն արդեն աղերսվում է սեփականատիրական զգացմունքի՝ կնոջը սեփականելու հանգամանքի հետ։

Տոհմական առևանգողների նման խումբը Հայաստանի քրդական բարերի մեջ կոչվում է «հավալտի» (ընկերություն) կամ «քոմա ջահիլ բարե» (բարի երիտասարդների խումբ)։ Բարական այս խմբերի միջև կարող էին ընդգրկվել միայն դաստաբրակները։ Բարի հասարակական միասնության մասին կան այլ փաստեր, որոնց մեջբերումը մեզ հեռուն կտաներ։

Հայաստանի բոլոր քրդերի մեջ բոլոր բարերը հայտնի էին նաև իրենց գաղափարական միասնությամբ։ Պամամական խմբերի անդամներն իրենց սերված էին համարում մի նախահորից և հարգում նրա հիշատակը։ Նախահոր հիշատակը հավերժացնելու համար բարի բոլոր անդամները սովորաբար ամեն տարի գարնան ամիսներին կատարում էին զոհաբերություններ, գլխավորապես ոչխար էին մորթում, ուտելիք պատրաստում, վճիտ ակրյուրներից կժերով ջուր բերում և տանում նախահոր գերեզմանի մոտ՝ կարիքավոր մարդկանց բաժանելու համար, որպեսզի, ըստ քրդերի հայացքների, նախահոր և իր մեռած արենակիցների հոգիներն այն աշխարհում ունենան իրենց բաժին ուտելիքը։ Ամեն մի բար ունեցել է իր առանձին գերեզմանոցը կամ շարքը գյուղական գերեզմանոցում և իր առանձին հոգևորականները, շեյխերն ու փիրերը[2] գլխավորապես եզդի քրդերի մոտ, որոնց մեջ ավելի ուժեղ էին հեթանոսական կրոնի մնացուկները։ Մահմեդական քրդերի մոտ հիմնականում մոլլան էր համարվում տիրապետող հո-

[1] Կնեզ—պարսկերեն է, նշանակում է աղջիկ, բարի, ցեղի աղջիկ կամ արենակից կին։

[2] Փիր—եզդի քրդերի ցածր աստիճանի հոգևորական։

գևորականը, որն ընդհանուր էր քրդական բարերի համար։ Հոգևորականները պարտավոր էին զեկավարել տոնակատարությունները, ծեսերն ու կրոնական արարողությունները։ Հոգևորականները միաժամանակ ցեղապետներ, բարապետներ և ռազմական առաջնորդներ էին։

Բարն ուներ առանձին սրբավայր։ Այսպես, օրինակ, Հայաստանի Ալարանի շրջանի Ղոնդաղսազ գյուղի «Կորկոտիա» (ձավարապաշտներ) բարը նույն շրջանի Պանկունյաց լեռնաշղթայում ուներ «Արդաուդ» կոչված սրբավայրը (պաշտելի քար) և ամեն տարի հուլիս ամսին բարի անդամները բարձրանում էին լեռան գագաթը, այնտեղ կատարում զոհաբերություններ, տոնախմբություններ և ծեսեր, որոնք անմիջականորեն աղերսվում են լեռների պաշտամունքի հետ։

Նախասովետական շրջանում, ըստ սովորության, լեռներում զոհաբերվող կենդանու մսի առաջին պատառը տրվում էր տվյալ բարի հոգևորականին, երկրորդ պատառը՝ բարապետին և ապա բարի անդամներին։ Հետագայում, մոտավորապես 1890-ական թվականներից հետո, արևնակցական-պամամական կապերի թուլացման հետևանքով, զոհաբերվող կենդանու միսը հավասար չափով բաժանում էին թե բարակից և թե ոչ-բարակից հարևաններին։ Քրդերից մեկն ու մեկի մահվան օրը բարի բոլոր անդամները, բացի գեռահասներից, իրրև սգո նշան, ճակատներին սև փուշի էին կապում և միացյալ ուժերով հյուրընկալում այլ գյուղերից եկած հաուարիներին (սգվորներին)։

Եթե մահացածի ընտանիքն ազքատ էր և հնարավորություն չուներ իր մեռածի հոգու համար խեր (հոգեհաց) տալու, այն ժամանակ բարի մյուս անդամներն իրենց բարակից մեռելի տիրոջն օգնելու նպատակով անասուն էին ուղարկում նրա տուն, որպեսզի վերջինս իր հանգուցյալի խերը պատրաստեր և բաժաներ հարևաններին։ Բացի այդ, բարի դաղափարական միասնության մեջ հատկանշական է «օջախը», որը իմաստաբանական տեսակետից ունի մի քանի նշանակություն։ Նախ՝ «օջախ» ասելով քրդերը հասկանում են նախահոր կողմից հիմնադրված կրակարանը՝ թոնիրը, պատի միջի բուխարին, երկրորդ՝ տունը և ամեն տեսակ հարստություններ, որ պատկանում էր մի ընտանիքի կամ ընտանիքների մի խմբի։ Օջախը կամ կրակարանը սրբագործված էր կրոնական ծեսերով, որի մեջ չէր կարելի թքել, շուրջը կեղտոտել։ Այն ընտանիքի կամ բարի բախտավորության նշանարանն էր հանդիսանում, դրա համար էլ հաճախ երդվում էին օջախով։

Հայաստանի քրդերը, բացի բարական հավատալիքներից, ունեին նաև իրենց ընդհանուր հավատը՝ մոնոթեիստական պատկերացմամբ։ Եզդի քրդերի մեջ հավատը դեպի արարիչ աստվածը ավելի թույլ էր։ Ուժեղ էր բնության, նրա առարկաների և երևույթների պաշտամունքը, որի մեջ գլխավորը կազմում էր նախ տոտեմական և ապա հետագայում երկրագործության աստված «Մալաքետաուդիս» պաշտամունքը։

Վերջապես, մինչև օրս էլ քրդերենում պահպանվել են արևնակցական-պամամական հարաբերություն արտահայտող մի շարք տերմիններ, որոնք ցույց են տալիս Հայաստանի քրդերի արևնակցական խմբավորումները։ Այսպես՝ բար (արևնակից ազգականների խումբ), բոխում (սերմ, մի նախահորից սերված սերունդ), ջընս (տեսակ, սերունդ), պամամ (արևնակից բարեկամ), սըլսըլա (ծագած մի տոհմից, մի ցեղից, մի բա-

րից), ասըլ (արենակցական խմբին պատկանելը, ծագումը որևէ խմբից). քոմա բրա-պամամա (եղբայրների, արենակից բարեկամների խումբ), զբարա (միասին աշխատելն ու գործելը), թայֆա (արենակցական, պամամական խումբ), աշիրաթ (ցեղ, արենակցական, պամամների մեծ խումբ, որոնց անդամները պատրաստ են ամենուրեք պաշտպանել միմյանց)։

Քրդերենում գտնում ենք նաև ասացվածքներ, որոնք հաստատում են պամամական խմբերի առկայությունն և քրդերի միացյալ ուժերով գործելու փաստը։ Բերենք հետևյալ օրինակները. խուալիա բրա-պամամա (եղբայրների հողամասեր), սուրիե բարե (բարի հոտ), մերեդ բարե (բարի տղամարդիկ), բը դաուատա ժրն ու մերե բարե (բարի կանանց և տղամարդկանց ուժերով, ջանքերով), չըկո դիկյա, սարքարե բարե դըկյա (ինչ որ արվում է, բարի գլխավարի ձեռքով է արվում)։

Այսպիսով, չնայած Հայաստանի քրդական գյուղի դասակարգային շերտավորմանը, նախասովետական շրջանում Հայաստանի քրդերի առանձին ազգակցական խմբերի մեջ մտնող անհատական (ինդիվիդուալ) ընտանիքների միջև դեռևս զգալիորեն պահպանված է եղել տնտեսական, հասարակական և գաղափարական միասնությունը։ Նման միասնությունը պահպանած խումբը պրոֆ. Մ. Օ. Կոսվենը անվանում է պատրոնիմիա, վերջինս դիտելով որպես նախնադարյան տոհմային կարգերին հատուկ պատմական հասարակական ձև։

«Պատրոնիմիան իրենից ներկայացնում է արենակից ընտանիքների մի խումբ, գոյացած մի մեծ ընտանիքի սեգմենտացիայից կամ բաժանումից, որոնք միմյանց մեջ պահպանում են տնտեսական, հասարակական և գաղափարական որոշ կապ, մի խումբ, որն այդպիսով կազմում է հասարակական որոշ կոլեկտիվ։ Պատրոնիմիան հասարակական-պատմական ձև է, նա բնորոշ է պատրիարխատ տոհմային կարգերին, բայց շատ կայուն կերպով պահպանվում է բազմաթիվ ժողովուրդների մեջ նաև դասակարգային հասարակարգի պայմաններում, իհարկե, ենթարկվելով դասակարգային այլափոխումներից։

Նույնը կարելի է ասել բարի մասին։ Քրդական բարը պրոֆ. Կոսվենի նշած պատրոնիմիան է, որն ի թիվս այլ ժողովուրդների, հատուկ է եղել նաև Հայաստանի քրդերին, որոնք պատմական որոշ պայմանների հետևանքով մինչև 20-րդ դարի սկիզբը, դասակարգային հասարակության պայմաններում, այլափոխված ձևերով պահպանում էին նահապետական տոհմային կարգերի ուժեղ մնացուկները։

---

[1] *М. О. Косвен.* Патронимия и проблема структуры рода. „Вопросы этнографии Кавказа", Тбилиси, 1952, էջ 237։